դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված պետական տուրքը Հայցվորի կողմից վճարվել է նախապես, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «ՎԱՐԴԱՆՈՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-22/77» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին 26.12.2022 թվականի որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ համապատասխան չափաբաժինների մասով «ՎԱՐԴԱՆՈՎԱ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:

2/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան